

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Մելիքյանի օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»,

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի լրամշակված տարբերակի վերաբերյալ:

«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1. 6-րդ հոդվածով նախատեսված «բ», «գ» և «դ» կետերը հուղարկավորությունների կազմակերպման ու իրականացման սկզբունքներ չեն:

2. 7-րդ հոդվածով լրացվող 7.1-ին, 7.2-րդ, 7.3-րդ հոդվածներով և 9-րդ հոդվածի նոր խմբագրությամբ առաջարկվում են նոր սկզբունքային դրույթներ, որոնք ուղղված են հուղարկավորությունների հետ կապված ծիսակատարության ավանդույթների մշակույթի ձևավորմանն ու կանոնակարգմանը: Առաջարկվող՝

1) 7.1-ին հոդվածի «գ» կետով առաջարկվում է թաղման նպաստի տրամադրում յուրաքանչյուր քաղաքացու համար : Նման մոտեցումը գործող օրենսդրության համեմատությամբ (ներկայումս տրամադրվում է թաղման նպաստ միայն մահացած կենսաթոշակառուների համար՝ 200,0 հազ. դրամ և գործազրկության նպաստ ստացող անձանց համար՝ նպաստի ամսական գումարի եռապատիկի չափով) զգալիորեն ընդլայնում է շահառուների շրջանակը և ենթադրում է զգալի լրացուցիչ հատկացումների անհրաժեշտություն, ինչպես Հայաստանի Հանրապետության պետական, այնպես էլ համայնքների բյուջեներից.

2) 7.2-րդ հոդվածի 1-ին մասի՝

ա. 4-րդ կետով նշված 7-օրյա ժամկետը, որը վերաբերում է մահացածի դին պաթուրգիանաատմիական կենտրոնում անվճար պահելուն, լրացուցիչ քննարկման կարիք ունի: Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 6-ի «Ախտա-

բանասանատումիական հերձումների անցկացման կարգը հաստատելու մասին» N 715 որոշման 5-րդ կետի «բ» ենթակետով սահմանված հերձման միջոցով դատաբժշկական փորձաքննության դեպքերի մեջ սահմանված է նաև այն դեպքը, երբ ախտորոշումը հայտնի չէ, իսկ տվյալ դեպքում դատաբժշկական փորձաքննությունն իրականացվում է առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում, անվճար հիմունքներով, որի մեջ մտնում է նաև դիակի պահպանումը: Նկատի ունենալով, որ փորձաքննությունն իրականացվում է բավականին երկարատև հետազոտությունների միջոցով, ժամկետային սահմանափակում նախատեսված չէ և գումարը փոխանցվում է յուրաքանչյուր դեպքի համար,

բ. 5-րդ կետով սահմանվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծված համայնքային ոչ առևտրային մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող պարտադիր ծառայությունների ցանկ, որն ըստ էության տեղական ինքնակառավարման մարմինների համար կազմակերպություններ ստեղծելու պարտականություններ է սահմանում: Այդ առումով գտնում ենք, որ նշված հարցերի կարգավորումը պետք է լինի որպես տեղական ինքնակառավարման մարմինների հայեցողական լիազորություն, այլ ոչ թե պարտադիր: Բացի դրանից, նշված պարբերության «բ», «գ» և «դ» ենթակետերում նշված ծառայությունները համայնքների կողմից չեն կարող մատուցվել համապատասխան ֆինանսական, նյութատեխնիկական և այլ միջոցների բացակայության պատճառով: Հարկ է նկատի ունենալ նաև, որ եկեղեցին իրավունքի ինքնուրույն սուբյեկտ է.

3) 7.3-րդ հոդվածի՝

ա. 4-րդ մասով նախատեսվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծված մասնագիտացված կազմակերպությունների միջոցով մատուցվող ծառայությունների ծախսերը փոխհատուցել Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջեների հաշվին:

Այդ կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետու-

թյան ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2009 թվականին հանրապետությունում մահացել են 27,6 հազար մարդ և հիմք ընդունելով մեկ հուղարկավորության համար 200 հազ. դրամ թաղման նպաստի չափը, նշված ծախսերը փոխհատուցելու համար տարեկան կպահանջվի մոտ 5,5 մլրդ դրամ, որը զգալի ազդեցություն կունենա պետական կամ համայնքային բյուջեների վրա: Հաշվի առնելով, որ 2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով ու Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի նախագծով նման ծախսեր նախատեսված չեն՝ ներկայացված խմբագրությամբ օրենքի նախագծի ընդունման դեպքում դրանք կարող են մնալ առանց ֆինանսական ապահովման:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերին,

բ. 5-րդ մասը պարզաբանման կարիք ունի:

3. 6-րդ հոդվածի «գ» ենթակետը հանել՝ հաշվի առնելով, որ նշված իրավահարաբերություններն արդեն իսկ կարգավորվում են «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

4. 9-րդ հոդվածի 3-րդ մասը քննարկման կարիք ունի, քանի որ հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպման կարգը համայնքի ավագանու կողմից հաստատվելու դեպքում տարբեր համայնքներում կսահմանվեն տարբեր կարգեր, ինչն ընդունելի չէ: Հարկ է նկատի ունենալ, որ քաղաքացին իր հայեցողությամբ պետք է որոշի, թե ինչ կարգով պետք է

իրականացվի մահացածի հոգեհանգստի և հրաժեշտի ծիսակատարության կազմակերպումը: Բացի դրանից, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հոգեհանգստի և հրաժեշտի ծիսակատարության կազմակերպման առանձնահատկությունները կարող են պայմանավորված լինել նաև մահացածի վերջին ցանկությամբ:

5. 13-րդ հոդվածով առաջարկում ենք օրենքի 18-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 18. Հուղարկավորությունների կազմակերպումն իրականացնող մարմինները

1. Հուղարկավորությունների կազմակերպումը՝ գերեզմանատեղերի տրամադրումը, դրանց հաշվառումը, գերեզմանատների պահպանումն ու շահագործումն իրականացնում է համայնքի ղեկավարը:

2. Համայնքներում հուղարկավորության կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են ստեղծվել ոչ առևտրային կազմակերպություններ:»

6. Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջները՝

1) 1-ին հոդվածում «փոխարինել» բառն անհրաժեշտ է փոխարինել «շարադրել հետևյալ խմբագրությամբ» բառերով.

2) 3-րդ և 6-րդ հոդվածներում անհրաժեշտ է լրացնել նոր խմբագրությամբ ներկայացված հոդվածների վերնագրերը.

ա. «ա» ենթակետում՝

- «սանիտարական» բառն անհրաժեշտ է փոխարինել «սանիտարահիգիենիկ կանոնների» բառերով,

- հստակեցման կարիք ունի «հուղարկավորություն» հասկացությունը, պարզ չէ բացի ազգային և կրոնական ավանդույթների համաձայն հողին հանձնելու ծիսական արարողություն-

նից թույլատրվում է արդյոք հուղարկավորությունն այլ ձևերով կազմակերպելը,

- նախագծով անհրաժեշտ է սահմանել աճյունասափոր, Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հուղարկավորության միանվագ օգնության գումար, թաղման նպաստի գումար և փաստացի մատուցված պարտադիր ծառայությունների ծախսերի տարբերության գումար հասկացությունները,

բ. կետերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին: Նույն դիտողությունը վերաբերում է 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 14-րդ հոդվածներին.

4) 4-րդ և 5-րդ հոդվածներն անհրաժեշտ է միացնել՝ նկատի ունենալով, որ նախատեսված լրացումն ու փոփոխությունները վերաբերում են օրենքի նույն 2-րդ հոդվածին.

5) 7-րդ հոդվածով լրացվող 7.1-ին հոդվածում խոսքը գնում է պետական երաշխիքների մասին, իսկ 7.2-րդ հոդվածում՝ մահացածի հուղարկավորության իրականացման երաշխիքների մասին: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հիշյալ հոդվածների դրույթները կրկնվում են, քանի որ վերաբերում են հուղարկավորության կազմակերպման և իրականացման երաշխիքներին: Բացի դրանից՝ հիշյալ հոդվածներից պարզ չէ «պետական երաշխիքների» և «երաշխիքների» իրական բովանդակության տարբերությունը:

6) 7-րդ հոդվածով լրացվող 7.1-ին կետի «բ» ենթակետում հստակեցնել, թե որոնք են «համապատասխան ծառայություններ»-ը,

7) 8-րդ հոդվածի՝

ա. «ա» կետը «հողին հանձնելու» բառերից հետո լրացնել «կամ հուշապատում տեղադրելու» բառերով,

բ. «բ» կետում «խմբագրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «բովանդակությամբ» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջի: Նույն դիտողությունը վերաբերում է նաև

նախագծի 16-րդ հոդվածին.

8) 10-րդ հոդվածը «ցուցադրումը» բառից հետո լրացնել «և վաճառքի գովազդային վահանակների տեղադրումը:» բառերով:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով տեղական ինքնակառավարման մարմնի համար նախատեսվում են իրեն ոչ բնորոշ գործառնություններ: Հարկ է նկատի ունենալ, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 29-րդ կետը լիարժեք կարգավորում է նախագծով բարձրացված հարցերը, քանի որ հիշյալ կետի համաձայն Երևանի ավագանին է որոշում ընդունում Երևանում գտնվող գերեզմանատների գործունեության և դրանց պահպանման աշխատանքների կազմակերպման և իրականացման կարգի վերաբերյալ:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1. 1-ին հոդվածում անհրաժեշտ է «2009 թվականի հունվարի 15-ի» բառերը փոխարինել «2008 թվականի դեկտեմբերի 26-ի» բառերով, «12-րդ հոդվածը» բառերը՝ «12-րդ հոդվածի 1-ին մասը» բառերով:

2. 2-րդ հոդվածում «55-րդ հոդվածը» բառերը փոխարինել «55-րդ հոդվածի 1-ին մասը» բառերով:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդ-

վածում «16-րդ հոդվածը» բառերը փոխարինել «16-րդ հոդվածի 1-ին մասը» բառերով՝ հանելով «-Ն» տառը:

«Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի անհրաժեշտությունը չկա, քանի որ գործող օրենքի 28-րդ հոդվածն արդեն իսկ ուժը կորցրած է ճանաչվել 2010 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՀՕ-248-Ն օրենքի 3-րդ հոդվածով:

«Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ հայտնում ենք՝

«Պետական կենսաթոշակների մասին», «Պետական նպաստների մասին» և «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով հստակ կարգավորված են բնակչության սոցիալական խոցելի խմբերում հայտնված անձանց մահվան դեպքում տրամադրվող դրամական օգնության և նպաստների հետ կապված հարաբերությունները, այդ թվում՝ նաև նշանակման և վճարման բոլոր ընթացակարգերը: Նշված օրենքներում նաև ամրագրված են մի շարք դրույթներ թաղման նպաստի և դրամական օգնությունների հասցեականությունն ապահովելու համար:

Մինչդեռ «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսված թաղման նպաստին առնչվող դրույթները հստակ և ամբողջությամբ չեն

կարգավորում այդ խնդրին առնչվող հարաբերությունները՝ թաղման նպաստին վերաբերող հարաբերությունների միասնականացումը նախագծի այս խմբագրությամբ չի ապահովվում:

Այս նկատառումով անընդունելի են «Պետական կենսաթոշակների մասին», «Պետական նպաստների մասին» և «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կատարվող փոփոխությունները:

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1. 1-ին հոդվածի կետերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին:

2. «բ» կետում անհրաժեշտ է «լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել ««ցուցաբերումը» բառից հետո լրացնել» բառերով, իսկ «հատուցումը» բառից հետո լրացնել «բառերը» բառը.

3. 3-րդ հոդվածի «դեպքում» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «բառերը» բառը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերնագրից անհրաժեշտ է հանել «Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» բառերը:

Ելնելով վերը շարադրվածից Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը լրամշակման կարիք ունի և այս տեսքով ընդունելի չէ:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանը:

Ներկայացնում ենք օրենքների նախագծերի փաթեթի ընդունման դեպքում ընդունումից հետո դրանց կատարումն ապահովող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների կամ այլ իրավական ակտերի ցանկը և ժամանակացույցը՝

«Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ներկայացված խմբագրությամբ ընդունելու դեպքում անհրաժեշտություն կառաջանա մշակել հետևյալ իրավական ակտերը՝

1. «Մահացածի հարազատներին կամ հուղարկավորությունն ստանձնած անձանց հուղարկավորության թաղման նպաստի չափը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որը նպատակահարմար է ընդգրկել ներկայացված օրենքների նախագծերի փաթեթում.

2. «Հուղարկավորության կապակցությամբ թաղման նպաստի վճարելու կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ՝ օրենքի ընդունումից հետո 3-ամսյա ժամկետում.

3. «Մահացածի հուղարկավորության ժամանակ մատուցված պարտադիր ծառայությունների ծախսերը փոխհատուցելու կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ՝ օրենքի ընդունումից հետո 3-ամսյա ժամկետում.

4. «Հուղարկավորության ժամանակ մատուցվող պարտադիր ծառայություններին ներկայացվող բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության պահանջներ՝

սանիտարական կանոններ և նորմեր»՝ օրենքի ընդունումից հետո մեկ տարվա ժամկետում:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Հողարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը սահմանելու մասին» N 1910-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ՝ օրենքի ընդունումից հետո 6-ամսյա ժամկետում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական կրթաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական կրթաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

"Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին", "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին", "Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքում" լրացումներ կատարելու մասին", "Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին", "Պետական կենսաթոշակների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին", "Պետական նպաստների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին" և " Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին" ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերը՝ սոցիալական պաշտպանության ոլորտում ունեն դրական ազդեցության:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

««Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Պետական կենսաթոշակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

««Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Պետական կենսաթոշակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների և դիակիզարանների շահագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>, <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>, <<Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Պետական կենսաթոշակների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Պետական նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>>, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների և դիակիզարանների շահագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>, <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>, <<Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Պետական կենսաթոշակների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Պետական նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>>, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ

կատարելու մասին»» Հայաստանի Հանրապետության օրենքների (այսուհետ՝ օրենքներ) նախագծերի փաթեթով նախատեսված փոփոխությունների և լրացումների ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների փաթեթի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա ևս բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների փաթեթով նախատեսվող փոփոխությունները և լրացումները բնապահպանության ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ

«Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական

նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

փոփոխություն կատարելու մասին , «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է մահացածների ընդանիքներին վճարվող նպաստին և հուղարկավորության կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերություններին*, և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն **չի նախատեսվում**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Զինծառայողների և նրանց ընդանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի բյուջեարային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

1. Նորմատիվ իրավական ակտերի Նախագծերի կարգավորման առարկան և արդյունքները.

Փաթեթով Նախատեսվում է Հայաստանի Հանրապետությունում կանոնակարգել հուղարկավորությունների կազմակերպման ու իրականացման, մահացածների ժամանակավորապես գտնվելու տեղի (դիախերճարան, մատուռ), հուղարկավորության կատարման վայրի (գերեզմանոց ու դիակիզարան) և ձևի, ինչպես նաև դրանց համար անհրաժեշտ նյութական և այլ օգնության հետ կապված հարաբերությունները:

2. Նորմատիվ իրավական ակտերի նախագծի ընդունման կամ չընդունման դեպքում՝ դրանց կիրարկման արդյունքում կանխատեսվող հետևանքները և բյուջետային բնագավառի վրա դրանց ազդեցությունն ըստ ժամկետների.

2.1. Փաթեթի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա.

Փաթեթում ընդգրկված՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով ենթադրվում է ՀՀ պետական բյուջեի եկամուտների ավելացում, քանի որ նախատեսվում է հուղարկավորությունների կազմակերպման և իրականացման կանոնները խախտելու համար սահմանել տուգանք՝ ֆիզիկական անձանց նկատմամբ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ չորս հարյուրապատիկի չափով:

Հաշվի առնելով նաև ներկայացված գործունեության մասով օրինազանցության անկանխատեսելիության գործոնը՝ բյուջեի եկամտային մասի վրա ազդեցության կոնկրետ գնահատում հնարավոր չէ իրականացնել:

2.2. Փաթեթի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի ծախսերի վրա.

Փաթեթում ընդգրկված «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 7-րդ հոդվածով, ինչպես նաև «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող փոփոխություններն ու լրացումները նախատեսում են թաղման նպաստի տրամադրում յուրաքանչյուր քաղաքացու, և բացի դրանից քաղաքացու հուղարկավորության կազմակերպման և

իրականացման ծառայությունների գծով որոշակի ծախսերի հատուցում: Նման մոտեցումը գործող օրենսդրության համեմատ (*ներկայումս տրամադրվում է թաղման նպաստ միայն մահացած կենսաթոշակառուների համար՝ 200,0 հազ. դրամ և գործազրկության նպաստ ստացող անձանց համար՝ նպաստի ամսական գումարի եռապարհկի չափով*) զգալիորեն ընդլայնում է շահառուների շրջանակը և ենթադրում է զգալի լրացուցիչ հատկացումների անհրաժեշտություն (*ֆինանսական գնահատականը հնարավոր չէ տալ տեղեկատվության բացակայության պատճառով*), ինչպես ՀՀ պետական, այնպես էլ համայնքների բյուջեներից: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ ինչպես ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով, այնպես էլ ՀՀ կառավարության 07.07.2011թ. «Հայաստանի Հանրապետության 2012-2014 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 955-Ն որոշմամբ հաստատված կողմնորոշիչ չափաքանակներով ու ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով այդ նպատակների համար համապատասխան միջոցներ նախատեսված չեն: Ուստի՝ նշված խմբագրությամբ Փաթեթի ընդունման դեպքում դրանք կարող են մնալ առանց ֆինանսական ապահովման:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Հուղարկավորությունների կազմակերպման եւ գերեզմանատների ու
դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Հուղարկավորությունների կազմակերպման եւ գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի փետրվարի 27-ի ՀՕ-40-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) վերնագիրը փոխարինել «ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» բառերով:

Հոդված 2. Օրենքի ամբողջ տեքստում «գերեզմանատուն» եւ «գերեզմանատներ» բառերը փոխարինել համապատասխանաբար «գերեզմանոց» եւ «գերեզմանոցներ» բառերով իրենց բոլոր հոլովածուներով:

Հոդված 3. Օրենքի 1-ին հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորության կազմակերպման եւ իրականացման, գերեզմանոցների եւ դիակիզարանների շահագործման հետ կապված հարաբերությունները եւ սահմանում է մահացածների հուղարկավորման տեղի ու ձեւի ընտրությանը ներկայացվող սանիտարաբնապահական անվտանգության ապահովման պահանջները եւ հուղարկավորման կազմակերպման հիմքերը, մահացածի հուղարկավորման այն երաշխիքները, որոնք առնչվում են կենդանության ժամանակ անձի կամ նրա հարազատների ցանկությունների արտահայտման, ինչպես նաեւ հուղարկավորության համար անհրաժեշտ նյութական եւ այլ օգնության տրամադրման հետ:»:

Հոդված 4. Օրենքի 2-րդ հոդվածում՝

ա) «հուղարկավորություն» հասկացության սահմանումը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«հուղարկավորություն՝ մարդու մահից հետո նրա մարմինը (աճյունը) կամ դիակիզման միջոցով մահացածի աճյունասափորը ազգային կամ կրոնական ավանդույթներով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարական եւ բնապահական պահանջներին համապատասխան հողին հանձնելու ծիսական արարողություն.»,

բ) «հուղարկավորության կազմակերպումը ստանձնողներ» հասկացության սահմանումը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «հուղարկավորության կազմակերպումը ստանձնողներ՝ մահացածի կամքով նշված կամ դրա բացակայության դեպքում հուղարկավորության արարողության կազմակերպումը կամովին կամ օրենքի հիման վրա ստանձնած անձինք (մահացածի հարազատներ, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ եւ այլ անձինք).»,

Հոդված 5. Օրենքի 2-րդ հոդվածը լրացնել նոր նախադասությունով հետեւյալ բովանդակությամբ.

«քաղաքացիական հոգեհանգիստ՝ ազգային կամ կրոնական ավանդույթներին համաձայն հուղարկավորությունից առաջ հրաժեշտի ծիսակատարություն»:

Հոդված 6. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

«Հուղարկավորությունների կազմակերպման ու իրականացման հիմնական սկզբունքներն են.

ա) անձի՝ իր մահից հետո նրա մարմնի նկատմամբ արժանապատիվ վերաբերմունքի ցուցաբերում, հարգում եւ պաշտպանություն պետության կողմից,

բ) անձն իր կենդանության օրոք գրավոր կամ վկաների մասնակցությամբ նաեւ բանավոր տվել է համաձայնություն (իսկ այդպիսի կամարտահայտության բացակայության դեպքում նաեւ մահացածի հարազատները կամ հուղարկավորության կազմակերպումն ստանձնողները հայտնել են ցանկություն) իր մահից հետո հուղարկավորման տեղի, ըստ այս կամ այն ավանդույթի՝ հուղարկավորության ձեւի ընտրության եւ դիակիզման ենթարկվելու վրաբերյալ,

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անձն իր կենդանության օրոք կարող է հրաժարվել մահից հետո հանդես գալ որպես օրգանների ու հյուսվածքների դոնոր,

դ) մահացածի մարմնի նկատմամբ արժանապատիվ վերաբերմունքն ամբողջությամբ իրականացվում է տվյալ անձի կամարտարտահայտմանը համապատասխան, եթե օրենսդրությամբ չեն սահմանվել այլ հանգամանքներ կամ ուղղակի անհնարին է իրացնել մահացածի՝ իր կենդանության օրոք արտահայտած ցանկությունները:»:

Հոդված 7. Օրենքը լրացնել հետեյալ բովանդակությամբ 7.1-րդ, 7.2-րդ եւ 7.3-րդ հոդվածներով.

«ՀՈՂՎԱԾ 7.1. ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հուղարկավորությունների կազմակերպման եւ իրականացման պետական երաշխիքներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության տարածքում յուրաքանչյուրին երաշխավորվում է իր մահից հետո հուղարկվորել՝ հաշվի առնելով կենդանության օրոք արտահայտած նրա կամքը, տրամադրելով նրա մարմնի (աճյունի) հուղարկավորման համար անվճար հողատարածք,

բ) հուղարկավորության կազմակերպման ու իրականացման դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի ձեւակերպում ու տրամադրում, համապատասխան ծառայությունների մատուցում.

գ) թաղման նպաստի վճարում:

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ երաշխիքներ:

ՀՈՂՎԱԾ 7.2. ՄԱՀԱՑԱԾԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության տարածքում մահացածի հուղարկավորության

կազմակերպումը ստանձնող մահացածի հարազատներին կամ այն անձանց, որոնք ստանձնել են մահացածի հողարկավորության իրականացումը, երաշխավորվում է՝

1) հուղարկավորության կազմակերպման ու իրականացման դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի ձեւակերպում ու տրամադրում,

2) մահացածին հուղարկավորելու ժամանակ կատարել կենդանության օրոք արտահայտած նրա կամքը,

3) տրամադրել մահացածի մարմնի (աճյունի) հուղարկավորման համար անվճար հողատարածք,

4) քաղաքներում՝ մինչեւ անձի մահվան պատճառների պարզումը, մահացածի հարազատներին կամ այն անձանց, որոնք ստանձնել են մահացածի հողարկավորության իրականացումը, հնարավորություն ընձեռել պետական իրավասու մարմնի համապատասխան եզրակացության հիման վրա՝ մահվան օրվանից մինչեւ 7 օր ժամկետով, մահացածի դին պաթոլոգիաանատոմիական կենտրոնում անվճար պահպանելու համար,

5) ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին համապատասխան՝ մահացածի հարազատների կամ հողարկավորությունը ստանձնած անձանց դիմումի հիման վրա մահացածի հուղարկավորության ժամանակ պարտադիր հետեւյալ ծառայությունների մատուցում.

ա) մահացածի հուղարկավորության համար անհրաժեշտ դագաղի եւ սգո պարագաների տրամադրում,

բ) դիակերծում,

գ) դիակիզում եւ աճյունասափորի տրամադրում,

դ) քաղաքներում ազգային ու կրոնական ավանդույթներին համապատասխան՝ գերեզմանոցներին եւ պանթեոններին, ինչպես նաեւ եկեղեցիներին կից մատուռներում մահացածին հողին հանձնելուց առաջ քաղաքացիական հոգեգահանգստի՝ հրաժեշտի ծիսակատարություն կազմակերպում:

ե) մահացածի մարմնի (աճյունի) կամ դիակիզման միջոցով մահացածի աճյունասափորի տեղափոխում գերեզմանոց, հուղարկավորում եւ մետաղե ցուցատախտակի տեղադրում:

Սույն օրենքի 5-րդ կետում նշված պարտադիր ծառայությունները մատուցվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծված համայնքային ոչ առետրային մասնագիտացված կազմակերպությունների (այսուհետ՝ մասնագիտացված կազմակերպություն) կողմից, իսկ այդ ծառայությունների սակագները սահմանվում են համայնքի ավագանու կողմից՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

6) Հասարակության եւ պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների կամ ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքի անդամի մահվան դեպքում, ինչպես նաեւ ծառայողական գործունեության կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների, ազատազրկման վայրերում, բուժհաստատություններում, ծերանոցներում ու մանկատներում մահացած անձանց համար կամ հուղարկավորության կազմակերպման ստանձնողներ չլինելու դեպքում մահացածների հուղարկավորության կազմակերպման եւ իրականացման

առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով, «Զինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության եւ այլ օրենքներով:

ՀՈԴՎԱԾ 7.3. ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏԻ ՎՃԱՐՈՒՄԸ

Մահացածի հարազատներին կամ հուղարկավորությունը ստանձնած անձանց՝ իրենց դիմումի համաձայն, վճարվում է թաղման նպաստ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ու չափով:

Թաղման նպաստի վճարումը կատարվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Սույն օրենքի 7.2-րդ հոդվածի 5-րդ կետում նշված պարտադիր ծառայությունների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել մահացածի հարազատներին կամ հուղարկավորությունը ստանձնած անձանց վճարվող թաղման նպաստի գումարին:

Մահացածի հուղարկավորության ժամանակ մատուցված պարտադիր ծառայությունների ծախսերը փոխհատուցվում են ՀՀ պետական կամ համայնքային բյուջեի միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

Մահացածի հարազատներին կամ հուղարկավորությունը ստանձնած անձանց վճարվող թաղման նպաստի գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված թաղման նպաստի գումարի եւ փաստացի մատուցված պարտադիր ծառայությունների ծախսերի տարբերության գումարի չափով:

Մահացածի հուղարկավորության ժամանակ մատուցված լրացուցիչ ծառայությունների գծով ծախսերը փոխհատուցվում են մահացածի հարազատներին կամ հուղարկավորությունը ստանձնած անձանց կողմից, եթե առկա է վերջիններիս գրավոր համաձայնությունը:»:

Հոդված 8. Օրենքի 8-րդ հոդվածում՝

ա). 1-ին մասի առաջին նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.
«Հայաստանի Հանրապետության տարածքում հուղարկավորությունը իրականացվում է մահացածի մարմինը (աճյունը) կամ դիակիզման միջոցով մահացածի աճյունասափորը գերեզմանատների սահմաններում տրամադրված գերեզմանատեղերում հողին հանձնելու միջոցով:»:

բ) լրացնել նոր 4-րդ եւ 5-րդ մասերով հետեւյալ խմբագրությամբ.

«4. Հանգուցյալի դիակը գերեզմանոց կարող է տեղափոխվել միայն դագաղով:

5. Ավտոդիատարների կայանումը թույլատրվում է միայն փակ կամ պարսպապատ կայանատեղերում կամ այդ նպատակի համար տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ առանձնացված հատուկ կայանատեղերում կամ ծառայություններին պատկանող համապատասխան տարածքներում: Այլ վայրերում ավտոդիատարների կայանումը խստիվ արգելվում է:»:

Հոդված 9. Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 9. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ՈՒ ՀՐԱԺԵՇՏԻ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄԸ

1. Մահացածի հարազատները կամ հողարկավորությունը ստանձնած անձինք կամավորության սկզբունքով՝ կարող են կազմակերպել գերեզմանոցներին եւ պանթեոններին, ինչպես նաեւ եկեղեցիներին կից մատուռներում մահացածին հողին հանձնելուց առաջ քաղաքացիական հոգեգահանգստի ու հրաժեշտի ծիսակատարություն:

Քաղաքացիական հոգեգահանգստի ու հրաժեշտի ծիսակատարությունը կազմակերպվում է մահացածի հարազատների կամ հողարկավորությունը ստանձնած անձանց նախաձեռնությամբ՝

ա) քաղաքներում գերեզմանոցներին կամ պանթեոններին կից սրահներում՝ մասնագիտացված կազմակերպության միջոցով,

բ) քաղաքներում եկեղեցիներին կից մատուռներում՝ մասնագիտացված կազմակերպության միջոցով, եթե առկա է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու համապատասխան թեմի առաջնորդարանի համաձայնությունը,

գ) քաղաքներում եւ գյուղերում՝ քաղաքացիների առանձնատներում՝ ինչպես մասնագիտացված կազմակերպության, այնպես էլ մահացածի հարազատների կամ հողարկավորությունը ստանձնած անձանց միջոցով:

2. Քաղաքների բազմաբնակարան շենքերում մահացածի քաղաքացիական հոգեգահանգստի ու հրաժեշտի ծիսակատարության կազմակերպումը, այդ թվում դագաղների, սգո ծաղկեպսակների եւ սգո այլ պարագաների տեղադրումը այդ շենքերի մուտքերում, արգելվում է:

3. Քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության եւ թաղման կազմակերպման կարգը սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ հաշվի առնելով ազգային եւ կրոնական ավանդույթները եւ սանիտարական ու բնապահպանական անվտանգության ապահովման պահանջները,

4. Հասարակության եւ պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքերում հրաժեշտի ծիսակատարության եւ թաղման կազմակերպման կարգերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 10. Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ՀՈՂՎԱԾ 11. ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳԸ

Դագաղների, սգո ծաղկեպսակների եւ սգո այլ պարագաների վաճառքը կարող է իրականացվել միայն վարագուրապատված կամ մզացված ապակիներով առետրական նշանակության շինությունում՝ բացառելով դրանց արտաքին ցուցադրումը:»:

Հոդված 11. Օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասում «16-րդ հոդվածում» բառերը փոխարինել « 7.2-րդ հոդվածի 5-րդ կետում» բառերով:

Հոդված 12. Օրենքի 16-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ՀՈՂՎԱԾ 16. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Համայնքի ղեկավարի կողմից հուղարկավորության կազմակերպման դեպքում համայնքի ղեկավարը ապահովում է սույն օրենքի 7.2-րդ հոդվածի 5-րդ կետում նշված մատուցվող պարտադիր ծառայությունները:»:

Հոդված 13. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասում «համայնքի ղեկավարի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության միջոցով» բառերը փոխարինել «մասնագիտացված կազմակերպության միջոցով» բառերով:»:

Հոդված 14. Օրենքի 19-րդ հոդվածի՝

ա) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՈՂՎԱԾ 19. ԳԵՐԵԶՄԱՆՈՅՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ՈՒ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ », ,

բ) 1-ին մասում «Գերեզմանատները կազմավորվում են» բառերը փոխարինել «Գերեզմանոցներ հիմնադրվում են» բառերով:

Հոդված 15. Օրենքի 24-րդ հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՈՂՎԱԾ 24. ԳԵՐԵԶՄԱՆՈՅՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ »:

Հոդված 16. Օրենքը լրացնել նոր 25.1.-րդ հոդվածով հետևյալ խմբագրությամբ.

«ՀՈՂՎԱԾ 25.1. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սույն օրենքի պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

Հոդված 17. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից, բացառությամբ 9-րդ հոդվածի 2-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում՝ Երեւան քաղաքում 2013 թվականի հունվարի 1-ից, Գյումրի եւ Վանաձոր քաղաքներում՝ 2014 թվականի հունվարի 1-ից, իսկ հանրապետության այլ քաղաքներում եւ բազմաբնակարան շենքեր ունեցող այլ բնակավայրերում՝ 2015 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածը լրացնել 17.1 եւ 17.2 կետերով հետեւյալ բովանդակությամբ.

«17.1) համայնքի ղեկավարի առաջարկությամբ սահմանում է համայնքի բնակչի մահվան դեպքում քաղաքացիական հոգեհանգստի ու հրաժեշտի ծիսակատարության եւ թաղման կազմակերպման կարգը.

17.2) համայնքի ղեկավարի առաջարկությամբ սահմանում է համայնքում հուղարկավորությունների կազմակերպման ու իրականացման ծառայությունների սակագները.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հունվարի 15-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածը լրացնել 29.1 եւ 29.2 կետերով հետեւյալ բովանդակությամբ.

«29.1) Քաղաքապետի առաջարկությամբ սահմանում է Երեւան քաղաքի բնակչի մահվան դեպքում քաղաքացիական հոգեհանգստի ու հրաժեշտի ծիսակատարության եւ թաղման կազմակերպման կարգը.

29.2) Քաղաքապետի առաջարկությամբ սահմանում է Երեւան քաղաքում հուղարկավորությունների կազմակերպման ու իրականացման ծառայությունների սակագները.»:

Հոդված 2. Օրենքի 55-րդ հոդվածը լրացնել 8.1-րդ կետով հետեւյալ բովանդակությամբ.

«8.1) Իրականացնում է «Հուլարկավորությունների կազմակերպման եւ իրականացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ.»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Նախագիծ
Պ-1249³-29.09.2011--010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ- 258 օրենքի 28-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Նախագիծ
Պ-1249⁴-29.09.2011-SS-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Բնակչության զբաղվածության եւ գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Բնակչության զբաղվածության եւ գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ- 206-Ն օրենքի 36-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին**

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ- 243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 44-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին**

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-205-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասում՝

ա) հանել «ինչպես նաեւ» բառերը,

բ) լրացնել նոր նախադասությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«ինչպես նաեւ քաղաքացու հուղարկավորության կազմակերպման եւ իրականացման ծառայությունների գծով որոշակի ծախսերի հատուցումը»:»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել նոր «գ.1» կետով հետեւյալ բովանդակությամբ.

«գ.1) թաղման նպաստը.»:

Հոդված 3. Օրենքի 11-րդ հոդվածից հանել«ընտանիքի անդամի մահվան դեպքում»:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ՀՈՂՎԱԾ 16. ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Թաղման նպաստի իրավունք ունեն սահմանված հուղարկավորության կազմակերպումը ստանձնող մահացածի հարազատները՝ «Հուղարկավորությունների կազմակերպման եւ

իրականացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 5. Օրենքի 17-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 17. ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Թաղման նպաստ վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, թաղման նպաստի չափը եւ վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ «Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորությունների կազմակերպման եւ իրականացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Թաղման նպաստի համար հուղարկավորության կազմակերպումը ստանձնած մահացածի հարազատներից կամ հուղարկավորությունը ստանձնած անձանցից մեկը դիմում է իր փաստացի բնակության վայրի տարածքային մարմին: Թաղման նպաստ նշանակվում է, եթե դիմումը ներկայացվել է մահվան օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

3. Թաղման նպաստ նշանակվում է յուրաքանչյուր մահացած քաղաքացու համար:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Նախագիծ
Պ-1249⁷-29.09.2011-SS-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել 111.1-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

ՀՈԴՎԱԾ 111.1. ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

Հուղարկավորությունների կազմակերպման եւ իրականացման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ չորսհարյուրապատիկի չափով:

Հոդված 2. Օրենսգրքի 219.1-րդ հոդվածում «Տեղական ինքնակառավարման մարմինները քննում են սույն օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ 6-րդ մասերով, 48-րդ հոդվածով՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով,» բառերից հետո լրացնել «111.1-րդ,» թվով:

Հողված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հուղարկավորությունների կազմակերպման եւ գերեզմատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Բնակչության զբաղվածության եւ գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման վերաբերյալ

«Հուղարկավորությունների կազմակերպման եւ գերեզմատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Բնակչության զբաղվածության եւ գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունումը պայմանավորված է հայեցակարգային մի շարք խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

Մասնավորապես, բնակչության սոցիալական պաշտպանությունն ուժեղացնելու, սանիտարահամաճարակային ու բնապահպանական անվտանգությունն ապահովելու, օրենքներում հասկացությունները միատեսակ սահմանելու, Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորության կազմակերպման եւ իրականացման, գերեզմանոցների եւ դիակիզարանների շահագործման, մահացածների հուղարկավորման տեղի ու ձեւի ընտրությանը ներկայացվող սանիտարաբնապահպանական անվտանգության ապահովման պահանջների եւ

հուղարկավորման կազմակերպման հիմքերի, մահացածի հուղարկավորման երաշխիքների սահմանման, վերջիններիս կենդանության ժամանակ անձի կամքի կամ նրա հարազատների ցանկությունների արտահայտման, ինչպես նաև հուղարկավորության համար անհրաժեշտ նյութական եւ այլ օգնության տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորելու նպատակով առաջարկվում է.

ա) «Հուղարկավորությունների կազմակերպման եւ գերեզմատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերնագիրը փոխարինել «Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորությունների կազմակերպման եւ իրականացման մասին» բառերով, ինչը հստակ բովանդակում է օրենքի եւ առարկան, եւ խնդիրները, եւ այն հարցադրումները, որին ուղղված պետք է լինի օրենքի նպատակները:

բ) Օրենքի ամբողջ տեքստում «գերեզմանատուն» եւ «գերեզմանատներ» բառերը առաջարկվում է փոխարինել համապատասխանաբար «գերեզմանոց» եւ «գերեզմանոցներ» բառերով իրենց բոլոր հոլովածներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ հողային օրենսգրքում օգտագործվում է միայն «գերեզմանոց» բառը:

գ) Առաջարկվում է ճշգրտել «հուղարկավորություն» եւ «հուղարկավորության կազմակերպումը ստանձնողներ» հասկացությունները, որոնց բովանդակությունը բխում է օրենքում դրանս հստակ ձեւակերպման անհրաժեշտությունից:

դ) Առաջարկվում է օրենքով ներմուծել հուղարկավորության կազմակերպման առանձին փուլ համարվող քաղաքացիական հոգեհանգստի՝ որպես մահացածին հրաժեշտի ծիսակատարության իրականացումը, որը բխում է մեր ազգային եւ կրոնական ավանդույթների պահպանման անհրաժեշտությունից: Սակայն, անհրաժեշտ է հաշվի առնել քաղաքներում բազմաբնակարան շենքերում քաղաքացիական հոգեհանգստի իրագործման ժամանակ բնակչության մոտ ստեղծվում է վախի, սարսափի սոցիալ-հոգեբանական այնպիսի սթրեսային իրավիճակ, ինչը կարող է ծանր հետեւանքներ ունենալ: Այդ կապակցությամբ առաջարկվում է այդպիսի ծիսակատարություններն իրականացնել ոչ թե բազմաբնակարան շենքերում, այլեւ այդ նպատակով ստեղծված սրահներում:

ե) Միաժամանակ, առաջարկվում է հուղարկավորությունների կազմակերպման ժամանակ պահպանել ազգային ավանդույթներին համապատասխան որոշակի պարտադիր ծառայությունների մատուցում: Դրանք են՝ ա) մահացածի հուղարկավորության համար անհրաժեշտ դագաղի, սգո ծաղկեպսակների եւ սգո այլ պարագաների տրամադրումը, բ) դիակերծումը, գ) դիակիզում եւ աճյունասափորի տրամադրումը, դ) քաղաքներում ազգային ու կրոնական ավանդույթներին համապատասխան՝ գերեզմատներին եւ պանթեոններին, ինչպես նաև եկեղեցիներին կից սրահներում մահացածին հողին հանձնելուց առաջ քաղաքացիական հոգեգահանգստի՝ հրաժեշտի ծիսակատարություն կազմակերպումը, ե) մահացածի մարմնի (աճյունի) կամ դիակիզման միջոցով մահացածի աճյունասափորի տեղափոխում գերեզմանատուն, հուղարկավորումը եւ մետաղե ցուցատախտակի տեղադրումը:

Ընդ որում, այդ պարտադիր ծառայություններն կլինեն երաշխավորված, դրանց սակագները կհաստատվեն ու կփոխհատուցվեն պետության կողմից:

զ) Առաջարկվում է սահմանել հուղարկավորության կապակցությամբ միանվագ

օգնություն կամ թաղման նպաստ ստանալու իրավունք վերապահել հենց հուղարկավորությունը ստանձնած անձանց:

Մեր կողմից արված առաջարկներն ունեն համալիր բնույթ եւ կոչված են հստակեցնելու գործող օրենսդրությունը, իսկ մյուս կողմից՝ կատարելագործելու դրանցում ամրագրված դրույթները: